ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ. փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Հայկական երկրորդ հեռուստաալիքի» եթերում 2022թ. մայիսի 13-ին «Հայելի ակումբ»-ի ուղիղ միացումների ժամանակ, ինչպես նաև 2022թ. մայիսի 20-ին «Հինգշաբթին Էդիկ Անդրեասյանի հետ» հաղորդման ընթացքում հնչեցված առանձին արտահայտությունների վերաբերյալ:

Դիմող՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով:

Դիտորդ մարմնի կազմը՝

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա. ՓԱՍՏԵՐ

1. 2022 թ. մայիսի 24-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտրդ մարմինը ստացել է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի № 04-454 գրությունը «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊԸ կողմից հեռարձակվող «Հայկական երկրորդ հեռուստաալիք» տեսալսողական ծրագրի «Հայելի ակումբ»-ի 2022 թ. մայիսի 13-ի ուղիղ միացումների ժամանակ հաղորդավարուհի Անժելա Թովմասյանի և հյուրերի (Դավիթ Սահակյանց, Էդգար Ղազարյան, Հռիփսիմե Առաքելյան), ինչպես նաև «Հինգշաբթին Էդիկ Անդրեասյանի հետ» 2022 թ. մայիսի 20-ի հաղորդման հյուրի (Արմեն Աշոտյան) կողմից հնչեցված առանձին արտահայտությունների սղագրությունը և հաղորդումների՝ խնդրո առարկա հատվածների տեսագրությունը: ՀՌՀ-ն, ղեկավարվելով ԴՄ աշխատակարգի 4-րդ մասի 4.7 կետով, ակնկալում էր ստանալ ԴՄ դիրքորոշումը հնչեցված արտահայտությունների վերաբերյալ:
2. 2022 թ. մայիսի 24-ին ԴՄ-ն դիմել է Հ2 հեռուստաընկերությանը՝ տեղեկացնելով բողոքի մասին:
3. 2022 թ. մայիսի 27-ին ԴՄ-ն ստացել է Հ2-ի «Լրաբեր» ծրագրի ղեկավար Շավարշ Գևորգյանի նամակը, որով

վերջինս հայտնել է, որ ՀՌՀ դիմումի հետ կապված իրենց դիրքորոշումները և մեկնաբանությունները ցանկանում են հայտնել ԴՄ առաջիկա նիստի ընթացքում։

4. 2022 թ. հունիսի 9-ին ԴՄ առցանց նիստում տեղի է ունեցել ՀՌՀ դիմումի քննարկում, որի ժամանակ Հ2 հեռուստաալիքի փոխտնօրեն Լևոն Սուլթանյանը ներկայացրել է իրենց դիրքորոշումը։

5. 2022 թ. հունիսի 12-ին ԴՄ-ն նամակով դիմել է Հ2 հեռուստաալիքի փոխտնօրեն Լևոն Սուլթանյանին՝ խնդրելով պատասխանել նաև հետևյալ հարցերին. «1. Արդյո՞ք «Հայելի» ակումբի մամուլի ասուլիսների լուսաբանումը Ձեր հեռուստաալիքի խմբագրական քաղաքականության մաս է կազմում, այդ առնչությամբ կա, արդյո՞ք, ղեկավարության (սեփականատերերի) կողմից կայացրած որոշում։ 2. Արդյո՞ք հեռուստաալիքը պաշտոնական պայմանագիր ունի «Հայելի» ակումբի հետ՝ ասուլիսների լուսաբանման վերաբերյալ։ 3. Հեռուստաընկերության ներկայացուցիչները երբևէ փորձե՞լ են «Հայելի» ակումբի ասուլիսների հաղորդավարի հետ բանակցել՝ իրադարձությունների լուսաբանման ժամանակ վերջինիս վարքագծի կանոնների շուրջ»։

6. 2022թ. հունիսի 15-ին ԴՄ-ն ստացել է Հ2 հեռուստաալիքի փոխտնօրեն Լևոն Սուլթանյանի պատասխան նամակը հետևյալ բացատրություններով.

   «1.Մամուլի ակումբներում, ներառյալ «Հայելի» ակումբում, ինչպես նաև այլ վայրերում կազմակերպվող հանրային հետաքրքրություն ունեցող ասուլիսների և այլ միջոցառումների լուսաբանումը հանդիսանում է մեր հեռուստաալիքի խմբագրական քաղաքականության մաս։ Հեռուստաընկերության խմբագրական քաղաքականությունը որոշվում է մեր ընկերության ղեկավարության կողմից։ 2. Մեր հեռուստաալիքը չունի պայմանագիր «Հայելի» ակումբի հետ՝ ասուլիսների լուսաբանման վերաբերյալ, քանի որ ասուլիսների լուսաբանման համար այն անհրաժեշտ չէ, ասուլիսների լուսաբանման պայմանագրեր չունենք և ոչ մի ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ։ 3. Որևէ բանակցություն «Հայելի» ակումբի ասուլիսավարի հետ վերջինիս վարքագծի կանոնների շուրջ մեր հեռուստաընկերության ներկայացուցիչները չեն ունեցել, ինչպես և այլ վայրերում կազմակերպվող հանրային մեծ հետաքրքրություն ունեցող ասուլիսներն ու այլ միջոցառումները կազմակերպողների և

անցկացնողների հետ: Այլոց մասնագիտական գործունեությանը մեր միջամտելը համարում ենք անընդունելի և անթույլատրելի»:

7. 2022 թ. հունիսի 22-ին տեղի է ունեցել ԴՄ առցանց նիստ, որում համաձայնեցվել է սույն եզրակացությունը:

Բ. ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. **Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր**

1.4. Հստակ սահմանազատել փաստերի և տեղեկությունների շարադրանքը՝ կարծիքներից, վերլուծություններից և մեկնաբանություններից:
1.5. Վերլուծություններ և մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի և հավաստի տեղեկությունների վրա:

4.2. Այն դեպքում, երբ խոսքի ազատությունը հակասության մեջ է մտնում մարդու մյուս հիմնարար իրավունքների հետ, լրատվամիջոցն ինքնուրույն է վճռում, թե ինչին տալ նախապատվությունը, և պատասխանատվություն է կրում իր վճռի համար:

5.1. Խուսափել մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքից՝ նրանց ցեղային, սեռային, տարիքային, կրոնական, ազգային, աշխարհագրական պատկանելության, սեռական կողմնորոշման, ֆիզիկական արատների, արտաքինի կամ սոցիալական կարգավիճակի պատճառով:

5.2. Որևէ ձևով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք և անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական և լեզվական հայտանիշներով խտրականություն, բացառել ատելության խոսքը:

II. ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի աշխատակարգ

4.7. Տեսալսողական մեդիա ծառայություններ մատուցողների գործունեությանը վերաբերող էթիկական խնդիրների առնչությամբ պատշաճ դիմող է ճանաչվում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը («Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի իմաստով)՝ որպես ոլորտը կարգավորող պետական մարմին, որը լիազորված է նաև հետևելու այդ ԶԼՄ-ների՝ մասնագիտական էթիկայի նորմերի պահպանմանը: ՀՌՀ-ից ստացված դիմումները քննվում են գործող ընթացակարգով, ինչի արդյունքում, եթե վեճը վերաբերում է Կանոնագիրը ստորագրած հեռուստաընկերությանը կամ ռադիոընկերությանը, ԴՄ-ն տրամադրում է եզրակացություն, իսկ մյուս դեպքերում՝

փորձագիտական կարծիք, կամ հանդես է գալիս հայտարարությամբ։

Գ. ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

գնահատելով, որ

- Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը շարունակում է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի դիրքորոշումը ստանալու ակնկալիքով նպաստել երկրում լրատվամիջոցների ինքնակարգավորման նախաձեռնության կարևորմանն ու ամրապնդմանը,

չցանկանալով

- այս եզրակացությամբ լայնորեն տարածել «Հայելի ակումբի» մամուլի ասուլիսի և «Հինգշաբթին Էդիկ Անդրեասյանի հետ» հաղորդման ժամանակ հնչեցված վիրավորական արտահայտություններն ու ատելության խոսքը,

արձանագրում է՝

- Կարծիքների ազատ արտահայտումը բացարձակ իրավունք չէ և կարող է սահմանափակվել, մասնավորապես, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի, հասարակական անդորրի պաշտպանության նպատակներով, իսկ գնահատող դատողությունները չպետք է հանգեն վիրավորանքի և ատելության խոսքի։

- ԴՄ-ն իրեն իրավունք չի վերապահում միջամտելու լրատվամիջոցների խմբագրական անկախությանը, սակայն հիշեցնում է, որ խմբագրությունը պատասխանատվություն է կրում իր հեռարձակած բովանդակության համար, անկախ նրանից՝ դա ուղիղ եթերով է եղել, թե ամրագրված ռեպորտաժով։

- Եթե ուղիղ միացման դեպքում հնարավոր չէ խուսափել տվյալ պահին հնչած արտահայտությունները հեռարձակելուց, ապա ամրագրված տեսանյութերում հարկ է կիրառել տեխնիկական այնպիսի միջոցներ, որ բացառվի ատելության խոսքի և ակնհայտ վիրավորանքի հեռարձակումը։

- Ե՛վ ՀՌՀ-ն, և՛ Դիտորդ մարմինը մի քանի անգամ անդրադարձել են «Հայկական երկրորդ հեռուստաալիքի» եթերում «Հայելի» ակումբից ուղիղ հեռարձակումների ընթացքում, ինչպես նաև հետագայում ամրագրված

տեսանյութերում հնչող ոչ եթերային արտահայտությունների, վիրավորանքի և բռնության կոչերի խնդրին։

- Ուստի, Դիտորդ մարմնի գնահատմամբ՝ հեռուստաալիքը կա՛մ պիտի խուսափեր ուղիղ միացումներից և այդ ակումբի ասուլիսների, քննարկումների և այլ միջոցառումների մասին հանրությանը տեղեկացներ միայն ամրագրված նյութերով (երբ հնարավոր է տեխնիկական միջամտություններով խուսափել անցանկալի արտահայտությունները եթեր հեռարձակելուց), կա՛մ էլ կիրառեր 20-30 վայրկյան հապաղումով ուղիղ եթերի տարբերակը, երբ նույնպես հնարավոր են տեխնիկական միջամտություններ։

Դիտորդ մարմինը պարզաբանում է, որ

- իր աշխատանքային պրակտիկայում, բացի խնդրո առարկա նյութերի բուն բովանդակության և դրանցում օգտագործված բառապաշարի՝ իրավական նորմերին և մասնագիտական էթիկայի սկզբունքներին համապատասխանությունը գնահատելուց, հաշվի է առնում մի քանի առանձնահատուկ հանգամանքներ։ Մասնավորապես, երբ բողոքը վերաբերում է հարցազրույցներին, մամուլի ասուլիսների լուսաբանմանը, էական գործոններ կարող են համարվել ա) թե արդյո՞ք նյութում ներկայացված է այլ տեսակետ (օրինակ՝ հարցազրուցավարի կողմից հակառակ դիրքորոշում ունեցողի կարծիքի մեջբերմամբ), բ) արդյո՞ք վիրավորական, գռեհիկ արտահայտություններ թույլ է տալիս միայն հյուրը, թե՞ նաև լրագրողը, արդյո՞ք վերջինս փորձ կատարում է զրույցը տեղափոխելու պարկեշտության հուն, գ) արդյո՞ք սուր արտահայտությունները, գնահատականները բխում են փաստական բովանդակությունից։

Ելնելով վերոնշվածից՝ Դիտորդ մարմինը եզրակացնում է, որ

- «Հայկական երկրորդ հեռուստաալիք» տեսալսողական ծրագրի «Հայելի ակումբ»-ի 2022 թ. մայիսի 13-ի ուղիղ միացումների ժամանակ հաղորդավարուհի Անժելա Թովմասյանի և հյուրերի (Դավիթ Սահակյանց, Էդգար Ղազարյան, Հռիփսիմե Առաքելյան), ինչպես նաև «Հինգշաբթին Էդիկ Անդրեասյանի հետ» 2022 թ. մայիսի 20-ի հաղորդման հյուրի (Արմեն Աշոտյան) և հաղորդավարի կողմից հնչեցված խոսքերում առկա են թե՛ վիրավորանք և թե՛ Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի 5.2. կետի

խախտումներ, այսինքն՝ պարունակում են քաղաքական հայտանիշներով խտրականություն, ատելության խոսք։

- Միևնույն ժամանակ, վերոհիշյալ հաղորդումների հյուրերի քննադատական դատողություններում Դիտորդ մարմինն էթիկական սկզբունքների կանոնագրի խախտում չի արձանագրում, համարելով, որ նրանց հայտարարությունները տեղավորվում են սուր քաղաքական պոլեմիկայի սահմաններում։

- Այդուհանդերձ, վերը նշված տարբերակման համար հիմքեր տվող հանգամանքները թույլ են տալիս պնդել, որ մամուլի ասուլիսների ժամանակ դրանց մասնակիցների ասելիքի հիմնական, հանրության համար կարևորություն ունեցող բովանդակությունը հնարավոր է լսարանին փոխանցել առանց էթիկայի կոպիտ խախտում պարունակող արտահայտությունների։

ԴՄ-ն կոչ է անում՝

- Հատկապես հեռարձակվող լրատվամիջոցներին՝ հաշվի առնել երկրի ընդհանուր լարված մթնոլորտը, հետևել սեփական եթերներին և հնարավորինս բացառել ատելության խոսքի, բռնության կոչերի տարածումը հանրության շրջանում։

- Երբ հաղորդած տեղեկությունը հույժ հրատապություն չունի, և նախկին աշխատանքային փորձը հուշում է էական հավանականության մասին, որ ուղիղ եթերում կհնչեն ատելության խոսք, վիրավորանք, ապա ավելի լավ է խուսափել դրանից և պատրաստել ամրագրված նյութով հաղորդումներ, կամ ուղիղ եթերները կազմակերպել 20-30 վայրկյան հապաղումով, ինչը ներկա տեխնիկական դարում միանգամայն հնարավոր է։

- Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին՝ հետևողական լինել հեղինակազորված և լիցենզավորված մյուս հեռարձակողների եթերում ևս էթիկական նորմերի խախտումների հայտնաբերման, դրանք մասնագիտական քննարկման նյութ դարձնելու հարցում։

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը հիշեցնում է, որ Կանոնագիրը ստորագրած լրատվամիջոցների ներկայացուցիչները, ընդունելով իրենց իսկ կողմից ընտրված Դիտորդ մարմնի իրավասությունը՝ քննելու իրենց գործողությունների ու հրապարակումների համապատասխանությունը Կանոնագրի դրույթներին,

պատրաստակամություն են հայտնել ԴՄ-ի որոշումը հրապարակելու իրենց լրատվամիջոցներում:

Ընդունվել է 2022 թ. հունիսի 22-ին, ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ, «Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության գործադիր տնօրեն
Արա ՂԱԶԱՐՅԱՆ, իրավաբան
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության օմբուդսման
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 69-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: